Հայաստանի Հանրապետութեան մէջ սահմանուած տօների մասին. — ա) Սահմանւում են հետեւեալ տօները.

Ընդհանուր պետական տօներ՝ նոր տարւայ ծննդեան և մկրտութեան, մեռելոցի, Տեառնընդառաջի, Վարդանանց և Բարեկենդան շաբաթ, Լուսաւորչի մուտն ի վիրապ, Զատկի երկուշաբթի և երեքշաբթի, Համբարձման, Թարգմանչաց և բոլոր կիրակի օրերը:

Ռուսների համար, բացի վերոյիշեալ ընդհանուր տօներից՝ Աւետումն Աստուածածնի, Վերափոխումն, Խաչվերացի, ծննդեան և նրա յաջորդ օրը, Նիկողայոս Հրաշագործի (9 մայիսի), Պօղոսի և Պետրոսի և Յովհաննու Մկրտչի գլխատման օրերը:

Մահմեդականների համար Իմամ Հուսէինի մահւան, նրա քառասուներորդ օրը, Մահմէդի մահւան, նրա ծննդեան, Ալիի ծննդեան, Գաբրիէլ հրեշտակապետաց Մահմեդի մարգարէական կոչումն յայտնելու, 12 իմամի ծննդեան, Ալիի վիրաւորելու և մահւան, Աստուծուց Մահմեդի Ղորանը ղրկելու, Պարսից առաջին տօնի, Աբրահամի Իսրայէլին զոհաբերելու, Մահմեդի Ալիի, Խալիֆ նշանակելու և Նովրուզ-Բայրամի երեք օրերը:

բ) Բոլոր հիմնարկութիւնները պիտի փակւեն, բանւորները և ծառայողները ազատ պիտի լինեն աշխատանքից, ամբողջ օրը ծննդեան, Ռուսական Մեծ Յեղափոխութեան (12 մարտի ն. տոմարով), Զատկի, մայիսի 1-ի, (Հայաստանի Հանրապետութեան պարլամենտի բացման, օրը), երկու ճրագալոյծների, պետական հասարակական հիմնարկութիւնները պիտի փակւեն կէս օրւայ ժամը 12-ին իսկ ուտեստի խանութները ժամը 4-ին:

Ծանօթ. Մահմեդականները փակում են առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնները կիրակի օրերը ժամը 12-ին, իսկ ուրբաթ օրը իրենց ցանկութեամբ ամբողջ օրը:

(Հաստ. յուն. 17-ին 1919թ.)

Լրացուցիչ օրէնք բամբակի մենավաճառի մասին. — 1) Ի լրումն 1918 թ. սեպտ. 11-ին և դեկտ. 3-ին հրատարակած օրէնքների՝ Ֆինանսների մինիստրին վերապահել իրաւունք միջոցներ սահմանել բամբակի օգտագործման և վաճառման վերաբերմամբ, ամէն անգամ պայմաններն ու գները որոշելով Մինիստրների Խորհրդի հաւանութեամբ:

2) Պետական գանձարանի միջոցներից Ֆինանսների մինիստրի տրամադրութեան տակ դնել տասը միլիոն (10,000,000) ռ. վճարելու համար բամբակատէրերին ձեռք բերւող բամբակի արժէքը՝ Հայաստանի Խորհրդի հաստատած մենավաճառային գնի համեմատ, ինչպէս և կատարելու բամբակ ընդունելու պահելու և փոխադրելու հետ կապած վերադիր ծախսերը:

(Հաստ. փետր. 7-ին 1919թ.)

Սերմացու և գիւղատնտեսական ինվենտար ձեռք բերելու նաև Հայաստանի Հանրապետութեան ազգաբնակութեանը դրամական անտոկոս փոխառութիւն տալու համար վարկ բանալու մասին. — 1) Պարենաւորման մինիստրութեան տրամադրութեան տակ դնել յիսուն միլիոն ռուբլի սերմացու և ինվենտար պատրաստելու, ինչպէս նաև սերմանելու համար դրամական փոխառութիւն տալու նպատակով:

2) Ցանձնարարել պարենաւորման մինիստրին կազմակերպել ազգաբնակութեանց փոխառութիւն, հացահատիկներ և ինվենտար բաշխելու